ՀԱՅԱՍՏԱՆԻ X—XIII ԴԴ. ՎԱՆՔԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԾՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՕՐԻՆԱՉԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հ. Ա. ԹՈՐԱՄԱՆՅԱՆ

Վանքային համալիրների շինարարության պատմության մեջ X—XIII դարերը նշանավորվում են որպես զարգացման բարձրագույն փուլ։ Ի տարբերություն վաղ միջնադարի, այս ժամանակահատվածի վանքերը դիտվում էին որպես հողային լայն տարածություններ ունեցող ֆեոդալական խոշոր տնտեսություններ։ Վանքային հոգևորականության նկատմամբ հայ ազնվականության բարյացակամ վերաբերմունքը հնարավորություն տվեց զգալի միջոցներ կենտրոնացնել, որոնք օգտագործվեցին համալիրների տարածքների վրա ինտենսիվ շինարարության համար։

Շինարարության ծավալմանը խթանեց վանքային բնակիչների թվային աճը։ XI դ. պատմիչ Ստեփանոս Տարոնացին այս առիթով նշում է, որ Հաղպատի և Սանահնի վանքերի բնակչությունը հասնում էր 500, իսկ Տաթևինը՝ 1000 մարդու[1]։ Պարզ է, որ այսպիսի խտության դեպքում վանքը իր բնակչությանը պետք է որ ապահովեր ամենակարևոր կենցաղային պայմաններով։ Ուստի վանքերի տարածքներում առաջ են գալիս դրանց կից տնտեսական շենքեր՝ սեղանատներ, հացատներ, պահեստներ։ Բացի այդ, վանքի հոգևորականությունը, պաշտամունքային գործունեությունից զատ, զբաղվում էր նաև գիտամշակութային աշխատանքներով։ Դրա համար անհրաժեշտ էր դառնում նաև կրթական-մշակութային շենքերի առկայությունը։

Վանքերի ամենանշանակալի քաղաքացիական կառույցներից էին գրադարանները, սեղանատները։ Առանձին կանգնած գրադարանները, որպես ինքնուրույն գոյություն ունեցող շենքեր, սկսեցին կառուցվել ոչ շուտ, քան X դ.։ Նշենք, որ գրադարանների չափերը էական դեր խաղացին վանքային համալիրների հատակագծման մեջ ընդհանրապես։ Համալիրների ճարտարապետության մեջ քաղաքացիական կառույցների ծավալահատակագծային ակտիվությունը գլխավորապես կախված էր համալիրի պաշտամունքային կենտրոնի նկատմամբ (որի մեջ իր գավիթներով մտնում էր եկեղեցական խումբը) դրանց հարաբերությունից՝ հեռավորությունից, փոխդասավորությունից, տեսողական ընկալումից։

Գրադարանի ծավալատարածական ձևը և նրա տեղադրման ուսումնասիրությունը վեր են հանում մի շարք օրինաչափություններ, որոնց հանրագումարը թույլ է տալիս շեշտել անսամբլի հատակագծային հորինվածքի մեջ գրադարանի նշանակության կարևորությունը։ Այդ շրջանի վանքերում (Սանահին, Հաղպատ, Գոշավանք) գրադարանները, որպես օրենք, գտնվում են ամենավաղ կառուցված եկեղեցիների անմիջական մերձակայքում։ Դա պայմանավորված է պատմական ավանդությամբ, որի իմաստը հետևյալն է։ Դեռ վաղուց, մինչև առանձին կանգնած գրադարանների առաջ գալը, ձեռագրերը, որպես գիտամշակութային կարևոր արժեքներ, պահվում էին եկեղեցիների, հավանական է, կառուցված առաջին եկեղեցու, ավանդատների մեջ[2]։ Հայաստանի X—XIII դդ. վանքային համալիրների հատակագծման մեջ օգտագործվել է շառավղային համակարգը, որ պայմանավորում է գրադարանի հեռավորությունը եկեղեցուց։ Սրանից ելնելով գրադարանների համար կարելի է

---

[1] *Ստեփաննոսի Տարօնեցւոյ Ասողկան պատմութիւն Տիեզերական, ս. Պետերբուրգ, 1885, էջ 74—75։*

[2] О. Х. Халпахчьян, Гражданское зодчество Армении, М., 1971, с. 124.

նկատել մի ընդհանուր օրինաչափություն։ Այսպես, գրադարանը ս. Աստվածածին (Սանահին), ս. Նշան (Հաղպատ), ս. Աստվածածին (Գոշավանք) եկեղեցիներից գտնվում է 20 մ շառավիղ ունեցող հեռավորության վրա (գծ. 1, 2, 3)։ Այս տեսակետից, ըստ վանքային համալիրների մասշտաբների, գրադարանը գրավում է պաշտամունքային կենտրոնի նկատմամբ ամենամոտիկ դիրքը։



Գծ. 1. Սանահնի վանք. գրադարանի տեղադրում։

Ուրիշ օրինաչափություն՝ դա կապն է գրադարանի ծավալի և եկեղեցու միջև։ Ընդհանրապես գրադարանը բաղկացած է տարբեր ժամանակներում առաջացած փոխլրացնող երկու մասերից։ Սրանցից հիմնականը ձեռագրերի պահպանումը ապահովող ծավալն է, երկրորդականը՝ այս ծավալը եկեղեցու հետ կապող միջնասրահը։ Երբեմն այս վերջինը միացնում է միանգամից երկու պաշտամունքային շենքեր՝ Սանահնի Գրիգոր Լուսավորչի մատուռը և ս. Աստվածածնի եկեղեցին, ինչպես և Գոշավանքի ս. Աստվածածին եկեղեցու գավիթը (որը նույնպես մտնում է պաշտամունքային խմբի մեջ) և գրադարանը։ Անհրաժեշտ է նշել այս կապող օղակի կարևորությունը, քանի որ այն վերացնում էր կոմպոզիցիոն մասնատվածությունը՝ թույլ տալով ստեղծել վանքային համալիրի ընդհանուր ուրվագիծը։ Գրադարանի նման տեղադրումը բացատրվում է հետևյալ նախադրյալներով՝ եկեղեցին, ունենալով գլխավոր (արևմուտքից) և լրացուցիչ (կողքից) մուտքեր, գրադարանի հետ կապված էր կողքի մուտքի միջոցով։ Այդ պատճառով գրադարանը տեղադրված էր կողքի մուտքի ուղղությամբ։

Թերևս, վանքային համալիրի տարածքի վրա գրադարանի տեղադրման գործում էական նշանակություն ունի որպես տաճարային հրապարակներ ծառայող ուղղանկյունաձև ազատ հողամասերի կազմավորումը։ Բոլոր երեք վանքերում՝ Սանահին, Հաղպատ, Գոշավանք, գրադարանների տեղադրումը պայմանավորված է ընդհանուր մի պահանջով։ Գրադարանը եկեղեցու նկատմամբ տեղադրված է շախմատային կարգով։ Հաշվի առնելով դրանց փոխտեղադրումը, ակներև է, որ ունում գրադարանի և եկեղեցու միջև կանոնավոր

երկրաչափական ձև ունեցող տարածության առաջացումը։ Ընդ որում, միջնասրահի հետ միասին գրադարանի շենքի լայնությունը մոտավորապես հավասարվում է կից եկեղեցու երկարությանը, որի հետևանքով դրանց միջև պարփակված տարածությունը ընդունում է գրեթե քառակուսի ձև։ Այսպես է Սանահինում, Գոշավանքում, որտեղ գոյություն ունեցող հրապարակները պահպանվեցին նախատեսված վիճակում (գծ. 1, 2)։ Հաղպատում գրադարանի շենքի մեծությունը անբավարար էր այն քառակուսի ձևը ստանալու համար, որը բնորոշ է Սանահնի և Գոշավանքի համար։ Դրա համար էլ, կարելի է ենթադրել, որ հետագայում, գրադարանից դեպի հյուսիս, շարունակելով նրա արևմտյան ճակատի գիծը, կառուցվում է ոչ մեծ մատուռը։ Հետևաբար, մատուռի և գրադարանի արևմտյան կողմերի, ինչպես և դրանց միջև եղած տարածության չափերի հանրագումարը հավասար է նույն եկեղեցու երկարությանը։ Այլ խոսքով, հողամասը նորից ընդունեց իր բնորոշ ձևը (դարձավ քառակուսի)։ Ավելի ուշ, այս հրապարակի վրա մատուռին կից կառուցվեց «Համաղասպի շենքը» (գավիթը), որի հետևանքով բաց ձևի հրապարակը ստացավ փակ ձև։



Դծ. 2. Գոշավանք. գրադարանի տեղադրում։

Այսպիսով, բոլոր նշված դեպքերում տաճարային հրապարակը կազմավերսլող (այսինքն՝ սահմանափակող) հիմնական տարրը դառնում է գրադարանը։ Գրադարանի տեղադրումը և դրա ծավալի մասնակցությունը վանքային համալիրի կերպարի ձևավորման մեջ թույլ է տալիս վեր հանել մի քանի օրինաչափություններ՝ հատկանշական այսպիսի համանման տեղադրումների համար.

— Սկզբնապես կառուցված եկեղեցու նկատմամբ գրադարանի անմիջական մոտիկությունը (20 մ հեռավորության վրա՝ ընդհանուր շառավղով) ապահովում է վանքի պաշտամունքային կենտրոնի ընդհանուր ուրվագծի և գրադարանի համատեղ ընկալումը։

— Գրադարանի հիմնական ծավալի կապը եկեղեցու (կամ եկեղեցական խմբի) հետ, որտեղ որպես կապող օղակ հանդես է գալիս գրադարանին պատկանող միջնասրահը կամ օժանդակ շենքը։

— Եկեղեցու և գրադարանի փոխտեղադրումը ներկայացնում է շախմատային կարգ (գրադարանը տեղավորված է եկեղեցու անկյունագծի շարունակության վրա)։

— Գրադարանը հանդես է գալիս որպես տաճարային հրապարակը շրջափակող տարր, որով որոշվում է նրա ծավալի տեղաշարժման ուղղությունը եկեղեցու նկատմամբ (ուղեցույց է ծառայում եկեղեցու կողքի մուտքը)։

Վանքի քաղաքացիական կառույցներից է նաև սեղանատունը։ Հայաստանում սեղանատների առաջացումը հայտնի է շատ հին ժամանակներից։ Դեռ ստրկատիրական ժամանակաշրջանից Հայաստանի կառավարիչների պալատներում և դղյակներում կային դահլիճներ, որոնք նախատեսված էին մեծ ճաշկերույթների համար։ Սեղանատների ինտենսիվ շինարարությունը նկատվում է ավելի ուշ, մոտավորապես V—VII դդ. և հատկապես XI—XIII դդ.։ Այդ ժամանակաշրջանում փոխվել էր սեղանատների նշանակությունը։ Եթե V—VII դդ. դրանք նախատեսված էին միայն վանքի նեղ շրջանակի այցելուների համար, ապա X—XIII դդ. սեղանատները ծառայում էին արդեն ծխականների ավելի լայն շրջանակների[3]։ Հավանական է, հենց այս հանգամանքը հիմնական պատճառ դարձավ վանքային համալիրի տարածքի վրա սեղանատան տեղադրման համար։ Որպես օրենք, պաշտամունքային կենտրոնը կազմավորվում էր շատ ավելի վաղ, քան սեղանատունը։ Դրա հետ միաժամանակ որոշվում էր դեպի վանքը տանող հիմնական ուղին։ Ընդ որում, ինչպես երևում է, սեղանատունը ֆունկցիոնալ տեսակետից կարող էր պաշտամունքային խմբից բոլորովին անկախ լինել։ Դրա համար սեղանատան մուտքը երբեմն դրվում էր ոչ թե վանքի տարածքում, այլ նրա սահմաններից դուրս (Հաղպատ, գծ. 3), երբեմն էլ (երկու մուտքերի դեպքում) մեկը լինում էր վանքի բակի կողմից, մյուսը՝ նրա սահմաններից դուրս (Գեղարդ)։ Այսպիսով, հաշվի առնելով սեղանատան ֆունկցիոնալ ինքնուրույնությունը և ընդհանուր մատչելիությունը, որոշվում էր նրա տեղադրումը՝ արդեն կազմակերպված համալիրի պայմաններում։ Սեղանատունը կառուցվում էր դեպի վանքը տանող ուղու վրա, վանքի մուտքի մոտ։ Իսկ դա պայմաններ էր ստեղծում սեղանատունը կցելու վանքի ցանկապատին (եթե այն գոյություն ուներ) կամ հենց սեղանատան ծավալն էր ծառայում որպես «ցանկապատ»։

Այսպես, Հաղարծնի վանքում առաջին շենքը եղավ ս. Գրիգոր եկեղեցին, որին ավելի ուշ կցվում է գավիթը։ Հետագայում եկեղեցուց արևելք կառուցվում է ս. Ստեփանոսի մատուռը։ Այս փուլում ժամանակավորապես ավարտվում է պաշտամունքային խմբի շինարարությունը։ Այսպիսով, ստեղծվում է գործող պաշտամունքային կենտրոն՝ այնտեղ տանող իր որոշակի ուղիով՝ հյուսիս-արևելքից արևմուտք և հետո արևմուտքից (որտեղ կա մուտք՝ դեպի վանքի տարածք) արևելք (պաշտամունքային կենտրոն)։ 1248 թ. կառուցված սեղանատունը տեղավորված է վանքի մուտքից հյուսիս, շրջանցվող տեղանքի, այսինքն՝ համալիրը տանող ճանապարհի վրա։ Վանքի հանդիսավոր բակի «ցանկապատ» դառնալով, սեղանատունը ձեռք է բերում երկու մուտք՝ արևմուտքից և հարավից։ Առաջինը կապում էր սեղանատունը այս կողմից կցվող շենքի, հավանական է՝ խոհանոցի հետ, երկրորդը ծառայում էր այցելուների համար։

Գեղարդի վանքում նույնպես ի սկզբանե կազմավորվել էր պաշտամունքային կենտրոնը՝ դեպի այնտեղ տանող գլխավոր ուղու հետ։ Վանքը տանող ճանապարհը ուղղված էր արևմուտքից արևելք։ Համալիրի մուտքը իրականացվում է արևմուտքից։ Այստեղ կառուցվում է նաև սեղանատունը, որի ծավալը դառնում է վանքի ցանկապատի մաս։ Այսպիսով, վանքի մուտքին մոտենալով, այցելուները պետք է որ անպայման անցնեին սեղանատան կողքով, որը, բացի բակի կողմից, մուտք ուներ նաև վանքի դրսից, այսինքն՝ այցելուների ուղուց։ Ինչպես և նախորդ դեպքերում, Հաղպատի վանքի սեղանատունը կառուցվեց՝ հաշվի առնելով վանքի մոտեցման ուղին (որի տարածքը կարելի է մտնել հյուսիսից և արևելքից)։ Դեպի վանք տանող գլխավոր ուղին անցնում է վանքի ցանկապատի ուրվագծով՝ այն շրջանցելով հյու-

3 Նույն տեղում, էջ 155։

սիսից դեպի արևելք։ Սեղանատունը կից է ցանկապատին՝ հյուսիս և արևմըտյան մուտքերի միջև։ Արևմտյան ճակատի (միակ) մուտքը բացվում է ցանկապատի սահմաններից դուրս՝ գտնվելով անմիջական շարժման ուղու վրա (գծ. 3)։



Գծ. 3. Հաղպատի վանք. գրադարանի և սեղանատան տեղադրումը։

Այսպիսով, կարելի է պնդել, որ սեղանատների շինարարության տեղի ընտրությունը պատահական չէր։ XI—XIII դդ. սեղանատները ապահովում էին այցելուների լայն շրջանակների պահանջները և կառուցվում էին մատչելի տեղամասերում։ Ընդ որում սեղանատան այցելությունը կարող էր կատարվել առանց վանքի տարածքը մտնելու։

Այսպիսով, վանքի տարածքի վրա գոյություն են ունեցել երկու՝ իրենց ֆունկցիաներով և ծավալով տարբեր քաղաքացիական կառույցներ, որոնց առկայությունը զգալիորեն հարստացնում էր համալիրի ողջ կոմպոզիցիան։ Վերևում նկարագրված տեղադրման մի քանի եղանակները այս երկու տիպերի համար թույլ են տալիս դիտել որոշ ընդհանուր դրույթներ։ Գրադարանների և սեղանատների կազմավորումը թելադրող պայմանն էր վերաբերմունքը դեպի արդեն գոյություն ունեցող պաշտամունքային կենտրոնը։ Առաջին դեպքում, որպես հիմք էր ընդունվում լրացուցիչ կողքի մուտք ունեցող եկեղեցին, որը զգալի չափով կրճատում էր անցումը եկեղեցու և գրադարանի միջև։ Երկրորդ դեպքում կազմավորված պաշտամունքային խումբը որոշում էր դեպի վանքը տանող ուղին, որի վրա տեղադրվում էին սեղանատները։

Այսպիսով, Հայաստանի X—XIII դդ. վանքային համալիրների ճարտարապետական կատարելությունը ոչ միայն տաճարային անսամբլի փայլուն մշակված կոմպոզիցիոն եղանակների կիրառման, այլև իր տարածքում քաղաքացիական ճարտարապետության օբյեկտների հմուտ օգտագործման մեջ էր։

НЕКОТОРЫЕ ЗАКОНОМЕРНОСТИ ПЛАНИРОВКИ МОНАСТЫРЕЙ АРМЕНИИ X—XIII ВВ

О. А. ТОРАМАНЯН

Резюме

Жизненная необходимость возникновения гражданских сооружений на территории монастыря вызвала целый ряд закономерностей их компоновочной структуры. Это прежде всего касается книгохранилищ и трапезных. Рукописи, хранившиеся ранее в церкви, переносятся в книгохранилище, которое располагают вблизи первой. Возникает устойчивый радиус дальности между двумя объектами—церковь-книгохранилище—20 м. Кроме территориальной близости происходит их объемно-пространственное единение, где связующим звеном выступает галерея или подсобное строение, принадлежащее книгохранилищу. Так как рукописями прежде всего пользовалось само монастырское духовенство, книгохранилище располагалось с той стороны церкви, с которой имелся дополнительный служебный вход. Одновременно перед подобным входом сохранялось обширное свободное пространство—площадь, поэтому объем книгохранилища смещается с оси входа на восток (Санаин, Ахпат) или на запад (Гошаванк), в результате возникает своеобразное диагональное соотношение церкви и книгохранилища, напоминающее шахматный порядок.

Выбор места строительства трапезных также не случаен. Прежде всего трапезные возводились на легкодоступных участках, с тем чтобы обеспечить доступ широких кругов посетителей, вследствие чего их местонахождение тесно связано с трассой подхода к монастырю. При этом учитывалась возможность их посещения, независимо от прохода на территорию монастыря.